


Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Ի Թ Ի Ւ Ք

ՄՐՅԱՆ ՏԵՍՈՒՆ

ՅՈՎՍԵՓԱՅ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՐԿՈՅՆԱԲՈԶՈՒԿ ԱՐԴՅՈՒԹԵԱՆՑ

ՎԱՅՆ

ՀՅՈՒԽԵՐՈՐ ԳԱՏԱՐԱՆԻՆ ՆԱԽԻՁԵԽԱՆԻ.



ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

—

Վասն եկամուտ ժողովարարաց, Վարդապետաց և
Քահանայից :

Ա.

Ժողովքարար ոք եկեղեցական կամ աշխարհական, ով ոք իցէ, ուստի եւ եկեցէ, առանց վկայական թղթոյ որ ոչ ունիցին խարբոյ Աքոռոյն Էջմիածնի Սրբազն Կարուղիկոսէն ամենայն Հայոց. մի ընդունիցին՝ ըստ նախնի կանոնի մերոյ, եւ ըստ նորոգ հրամանի ամենաբարեպաշտ մեծ Կայսերուհոյն Եկատարինէ Ալեքսիովնին ամենայն Ռուսաց, ի1768 քուոչ ֆրեզին, եւ իյամսեանն յունիսի 30, առ երանուրեան Աստուծոյ արծանառը Սուրբ Հայրապետըն մեր Սիմեոն. եւ իսմին քուոչս առ ամենայն գաւառապետուն, որպէս յայտ է իշրովքարտակացն. եւ ի1779 եւ յամսեանն նոյեմբերի առ նոր նախիջևանցիս :

Այլ երէ ոք ունիցի զբուղը վկայուրեան ինմանէ, ովք են այսոքիկ, այսինքն՝ վանքի տէր, անապատի, գերետէր, եւ պարտատէր, ընկալցին զնոսա ըստ խրաքանչիւրոցն պատուոյ եւ ըստ աստիճանի, եւ ցուցանիցեն նմա զմարդասիրուրինս եւ զսէր եւ զտուրս ողորմուրեան ի փառս Աստուծոյ :

Բ.

Եկամուտ ժողովքարար Եպիսկոպոս, Վարդապետ, արքայ, եւ քահանայ, մի իշխեցեն եկեղեցւոյն եւ քահանայիցն վասն եկեղեցական արարողուրեանց եւ քահանայա, կան պաշտամանց, որպէս թէ ոչ զիտեցեալն քահանայից ուսուցանել կամելով իշխողարար, եւ կամ պակասն եկեղեցւոյն լցուցանելով, զի այն՝ վիճակի Եպիսկոպոսին է զործ, եւ ոչ նոցա. եւ կամ թէ յատուկ քահանայ ոք դատել կամելով. զի եւ այն իւր Եպիսկոպոսին է զործ, եւ ի նմանն կարգեալ նոզեառ դատաւորացն :

Գ.

Եկամուտ ժողովքարար Եպիսկոպոս, Վարդապետ և կամ քահանայ, մի իշխեցեն եւ մի լիցի նոցա նամար-

ձակիւ եկեղեցական օրինօք դատել զանձնագանդան եկեղեցւոյ եւ օրինաց, եւ կամ հասի եւ չհասի իրաւունս տալ. զի չէ զործ նոցա: Եթէ գացի ոք արարեալ, նոզեառ դատարանն մեր դատեսցէ զայնպիսի յանդուզն անձն, եւ կամ իրաց վանել:

Դ.

Մյսպիսի ժողովքարարքս ջունիցին իշխանուրիւն ումեր վկայական բուղը տալ, որպէս թէ բարառուն մամանական առաջի նոզեառը եւ մարմնաւոր դատաւորաց զինքն ճշմարտեսցէ այնու բորով, թէ այս ինչ կարգաւորէ վկայուրիւն ունիմ ճշմարտուրեանս: Եւ դարձեալ՝ կտակի, խոստմունքի, սանարի, բարարի, վաճառականուրեան, ընկերազրի, եւ այլ ամենայն եկեղեցական եւ աշխարհական բորոց՝ ծեռագրով վկայ մի լիցին, զի այն ամենայն չէ նոցա զործ: Զի վկայուրիւն նոցա ունայն է եւ իզլար:

Ե.

Ժողովքարար Եպիսկոպոս եւ այն ամենայն, ով ոք եւ իցէ, իպատահիւն իւրեանց առանց բղրոյ զոր պարտ էր ունել իՄըրոյ Էջմիածնի Սրբազն Հայրապետէն, մի ոք իշխեցէ այնպիսոյն կողմնապահ լինել եւ տէրուրիւն առնել իծածուկ կամ յայտնի, եւ իշխողարար զայնպիսին իներս բերել եւ ժողովք տալ, որպէս թէ իւրն ազգային, երկրացի, քաղաքացի կամ այլ ինչ պատճառելով. զի այս զործ եւ արարողուրիւն զհասարակուրիւնն յերկուս բաժանէ, եւ զմիարանուրիւն սուրբ եկեղեցւոյ քակէ: Զայնպիսի խոռվարան դատեսցեն նոզեառ դատարանն մեր եւ մազիստրան :

Զ.

Եպիսկոպոս, Վարդապետ, արքայ կամ քահանայ ժողովքարար, ով ոք եւ իցէ, իմտանելն իւր իքաղաքս, աւելի քան զանմանեալ ժամանակն մի մնացէ. այլ իւր ժողովքն արարեալ՝ եցէ իքաղաքէն: Ես սանմանաղընալ ժամանակն եղիցի մեկ ամիս եւ կամ վեց շաբաթ: Խոկ սուրբ Երուսաղեմայ հրաւիրակն երեք ամիս: Զկնի ժամանակացն՝ նարկիս պարտին եղանել իքաղաքէ, զի այնպիսեաց երկար մնալն՝ յամենայն ժամանակս վտանգ է ծնեալ քաղաքին եւ

վիճակի եպիսկոպոսին . եւ վասն այնորիկ է կանոնք սրբոց Հարցն վասն այնպիսեացն՝ մի յամել իքաղաքի տաելի քան զերիս եօրնեակա . այս է երիս շարարս . զոր մեք վասն որ պիտուրեան երկրին՝ զշարարն յամիս փոխեցաք , եւ այլ աւելի ոչ : եւ իսմին միջոցի , հոգեւոր դատարանի մերոյ եղեալ դատաւորքն պարտին հարկադրել քահանայիցն եւ ժողովրդեանն՝ փուրով իկատար հասուցանել զգործս սոցա , որ կարիցեն շուտով ելանել :

Ե.

Այսպիսի ժողովքարարքս՝ թէ եւ ունիցին զվկայական կոնդակ իՍրբազան Հայրապետացն Ա. Արռողյուն Էջմիածնի , քայց երէ վիճակի եղեալ Սրբազան Արքեպիսկոպոսն չինիցի իքաղաքի , պարտին հոգեւոր դատաւորքն , զորպիտուրինն ժողովքարարին այնմիկ զրով իմացուցանել նմա , եւ որպէս նա հրամայեացի՝ լինիցի այնպէս :

Բ.

Մեկ ժողովքարար , ով ոք եւ իցէ , մի եւ նոյն կոնդակաւան զոր ունիցի իՍրբազնասուրք Կարուղիկոսէն , իմի եւ նոյն քաղաք երկու անգամ մի մտցէ , որպէս թէ զկոնդակն զոր ունի իՍրուրք Էջմիածն՝ անվախան եւ ընդհանրական պատմառելով : Այլ մի եւ նոյն կոնդակաւան մի անգամ ժողովք արացեն : Զի երէ սրբոյ մեծի Արռողյուն Էջմիածնի մի եւ նոյն նուիրակն մի եւ նոյն կոնդակաւան , իմի եւ նոյն վիճակէ եւ քաղաքէ , մի անգամ առնու զիւր նուիրակուրինն եւ աւելի ոչ , եւս առաւել վասն այլոց եղեցի այս կանոն :

Թ.

Ժողովքարար ոք , ով ոք եւ իցէ , իւրով ժողովովն բառականացի . եւ մի եւս մտցէ ծակէ իծակ , եւ մի իշխեցէ զպառակ կանայս յուղարկել իտուն ժողովքեան առլանայսն վասն ուկոյ կամ արծարի , նանդերձի եւ կամ այլ իրաց , որպէս թէ արարեալ ժողովքն չեղեւ . բաւական իւրն : Զկնի այնորիկ՝ եւ զայլս եւս պահանջեն իժողովքենէն . այս է զիշատակս , զկտակս , զնոգերամինս , տասանորդս , խաչանամբոյրս եւ այլ այսպիսիս : Որոց վասն զրեմք ոչ զործել զայս զործ , ձեռն ձգելով իրամինս այլոց , եւ լինել թեռն ալլոց ժողովքեանն : Եւ դարձեալ , ինքեանք զորով ժողովքարար , զզործ նուիրակի զործեն , եւ զտուրս ժողովքեանն իշխողարար առնուն : Նաևս այնքան համարձակեալք՝ մինչես զինքեանս նուիրակ կոչեն՝ վասն փառաց եւ արդեանց , եւ զայլս այսպիսիս , որոց վասն զբեցաք ոչ առնել այնպէս , որպէս բազումք արարեալ եխն ի՞ւսիմ . այլ զոր ինչ իժողովքարարուրեան կոնդակս իւրեանց զբած է՝ զայն առցեն , եւ առ այլս մի մերձեցին : Եւ նոգեւոր դատաւորքն նախապէս զգացուցեն նորելի ժողովքարարին զկանոնս զայս . իշլսէն՝ յետ միոյ նախատելոյն եւ ոչ զգաստանայոյն , իդատարանին դատեացեն զնա , եւ երէ յանդուզն ոք լինի՝ վարեցեն :

Ժ.

Ժողովքարար ոք եպիսկոպոս , Վարդապետ , արեղայ , քահանայ , եւ կամ ով եւ ոք իցէ , իվանքէ կամ յանապատէ եկեալ իցէ , երբ իւր ժողովքն աւարտէ եւ զնալոյ լինի , հոգեւոր դատարանի մերոյ դատաւորքն զդաւրարս նորին տեսցեն , եւ զոր ինչ արդիւնք ունիցի իքաղաքէ անտի , երէ նադր , եւ երէ վէճ , ըստ չափու արդեանցն ինմանն զավգ առցեն , եւ վիճակի Սրբազան Արքեպիսկոպոսին յայտնի արացեն , եւ ինքեանք իշխատակարանի զրեցեն՝ եւ Եպիսկոպոսն եւ դատաւորքն զորքանն զրեցեն այնմ , ուստի եկեալն է ժողովքարարն . զի վասն զանցառուրեանն յուով արդիւնք ժողովքեանն կորաւ իձեռն ժողովքարարաց մինչեւ ցայսօր ժամանակի :

ԺԱ.

Ո՛չ զոյ հրաման իՍրբոց Հայրապետաց՝ որ ժողովքարարքն ընդ ինքեանս զմատունս սրբոց եւ կամ զսուրք նըշանս շրջեցուցանիցեն . քայց երէ ոք թերեալ իցէ եւ ասիցէ , զոր ունիմ՝ այս ինչ առաքելոյ մասն ընդիս , եւ կամ այս ինչ սրբոյ մասն է , կամ թէ այս ինչ անուամբ սուրբ նըշան է , քննեցեն վասն այնորիկ դատաւորքն հոգեւորք . զի այնպիսին պարտի ունել զվկայական բուղը ինոյն տեղուոչ առաջնորդէն վասն ընդ իւր թերեալ սրբուրեանցն . որով հաւատակի լիցի բանն որ վասն սրբուրեանն , եւ ապա ընկալեցին զսրուրիւնն ըստ զրոյն եւ ըստ բանին :

ԺԲ.

Եւ յորժամ այս երկու վկայուրեամբս , այս է զրով տեղանստոյ Առաջնորդին եւ թերողին հաւատարմասցի բանն զոլ ճշմարիտ , առցեն զսրուրիւնն , եւ դիցեն յեկեղեցին պատուով մինչեւ ցաւարտումն զործոյն ժողովքի , եւ յետ կատարմանն՝ իմէջ եկեղեցւոյն ամենայն ժողովքեանն հանդիսի ուխտ արարեալ՝ համբուրեանց զսրուրիւնն , եւ տայցեն զընծայս իւրեանց զոր ինչ եւ ախորժեսց ոք . եւ զայն եւս զրեցեն իդատարան ժողովքին , եւ իդավզն ժողովքարարին , զի եւ այն ընդ ժողովքին է համարեալ :

ԺԳ.

Եւ բաց յայսցանէ , մի լիցի համարձակի ժողովքարարին այնմիկ՝ որպէս թէ առնուցու զսրուրիւնն եւ շրջեցի տան իտուն արտաքոյ եկեղեցւոյն . զի այն անարգուրիւն է սրբուրեանցն եւ ոչ պատիւ . զի իտան Հօր իմոյ պարտ է ինձ լինել ասաց Տէրն , եւ մեք պատուել պարտիմք զսուրք սըն եւ ոչ անարգել : Եւ երէ շերմեռանդ ոք իցէ , ինքն պարտի զալ ինամբոյը սրբուրեանցն , եւ ոչ երէ զսրուրիւնն իյուս իւր տանիւ , զոր չէ արժան . քայց երէ նիւ նանդ ոք իցէ եւ խնդրեցէ , մի արգելցեն . զի եւ ինքն Քրիստոս զնալը առ նիւանդան :

ԺԴ.

Եկամուտ Եպիսկոպոս ոք մի իշխնեցէ զաստիճան տալ ումեք, իմիոյն մինչեւ ցեօրն, եւ մի համարձակիցի մերձենալ օրհնել զիսաց, զպատկեր' զսկին եւ զայլս այսպիսիս առ ամենայն իրս Եկեղեցականս, որպէս սովոր են այլ ուրեք առնել ընդդէմ ամենայն կանոնաց եւ աւանդութեանց սուրբ Եկեղեցւոյ. բայց քէ՝ հրամանաւ վիճակի Սրբազն Արքեպիսկոպոսին. զի քարց նորին կամաց ոչ զոյ հրաման յեկեղեցւոյ սրբոյ առնել ումեք զայս ամենայն :

ԺԵ.

Ժողովքարար ոք, ով ոք եւ իցէ, երէ գտանիցի խարեւալ, այս է որ կախարդութեամբ զիր առնէ, եւ խոստանայ առնել ինչ, որպէս քէ զամուլս զաւակարերս առնել՝ եւ զայլս այսպիսիս, եւ կամ ստորթեամբ զինքն այլ աստիճանառս ձեւացուացէ, որ չէ. որպէս քէ վարդապէտ զուով՝ Եպիսկոպոս ձեւանայ, եւ կամ այլ այսպիսի, երէ գրտանիցի, եւ չարիքն իշխան Եկեղեցն, եւ կամ դարձեալ երէ արքեցոյ լինիցի եւ կամ անառակ, եւ գտուրս ժողովրդեանն եւ զողորմութիւնս իգուր վատնիցէ, զգոյշ լինիցին որ ժամանակին այնմիկ նոգեւոր դատաւորքն են. տեսցեն զնաշիւն եւ առցեն ինմանէ զոր ինչ ժողովեալն իցէ, եւ զրուղըն որով նա Եկեալ իցէ վասն ժողովոյ. եւ երէ խաչ կամ մասն սրբոց ունիցի, զամենայն առցեն եւ դնիցեն իդատարանն նոգեւոր, եւ զիտութեամբ վիճակի Սրբազն Արքեպիսկոպոսին՝ զրեսցեն այնմ Առաջնորդին եւ կամ վանահօրն յորմէ Եկեալն իցէ, եւ զոր առմինն՝ հաւատարիմ արամբ նմա հասուացեն, զի մի կորիցէ նուրեք ժողովրդեանն. եւ զայնպիսին իքաղաքէն իրաց հանցեն :

ԺԶ.

Ամենայն Եկամուտ կարգաւոր մի իշխնեցէ առնել մկրտութիւն, պսակ, տունօրինեք եւ այլ ինչ, եւ մի միշխնեցէ զձեռն իւր իբաժին այնոցիկ որք այնմ քաղաքին քանակքն իցեն, այլ իմիսիբարութիւն ինքեան, զկնի աւարտման զործոյն ժողովքի, իւրաքանչիւր Եկեղեցւոշն մեկ մեկ ժամ արասցէ, եւ վարձատրեսցի վասն թանին վարդապետութեան՝ որովք զժողովութեան միփիրարեալ իցէ, զի արժանի է մշակն վարձու իւրոյ. եւ ժողովութեան առատաձեռն լինիցին առ տուրս ողորմութեան իժամարարութեան նորա, զի զոնանալով զնասցէ. զի այն միջյն է յատուկ բաժին անձին իւրոյ. եւ բաց յայնմանէ, ամենայն Եկեալքն են իհամարս ժողովոյն, որք պարտին հասանել յայն տեղի՝ ուստի ինքն Եկեալ իցէ: Տես իկանոնզիրքն :

Եսկ երէ ժողովքարարն իցէ աշխարհական զերետէր, պարտատէր եւ այլ այսպիսի փորձանաւոր, քէ եւ ոչ ունի-

ցի զվելայական զիր իՍրբազն Հայրապետէն, այլ քէ եւ այլք վկայեցին վասն նորա, ընկալցեն զնա իգրութիւնս. եւ Եկեղեցիսն միայն տացեն նոցա ժողովք: Բայց եւ խոցունց բազումք լինին խարեթայք, զգուշութեամբ տեսցեն զայնս :

Ասէհ զրեմի եւ վասն Սուրբ Երուսաղեմայ Եկեալ հրաւիրակացն:

ԺԷ.

Սուրբ Երուսաղեմայ Եղեալ վանօրէից մերոց վերատեսուց եւ Առաջնորդ Արքեպիսկոպոսն մի իշխնեցէ իւրով կոնդակաւան, բարց վկայական կոնդակի Սրբազնատուր Հայրապետին ամենայն Հայոց, եւ սուրբ Արոռոյն Եջմիածնի, զոք առաքել իշխողաբար եւ հրամայօրէն. եւ իգրուածս նորին ոչ այլ ինչ պարտի լինիէ՝ երէ ոչ յորդորմունք ժողովրդեանն վասն ողորմութեան վանօրէիցն մերոց :

ԺԸ.

Եւ ըստ կանոնական օրինաց մերոց նախնականաց՝ ոչ ունի նա իշխանութիւն իկոնդակս իւր զրել իվիճակ ուրուք Եպիսկոպոսի՝ կապել եւ արձակել, եւ կամ զիրակիրակն իւր ծայրագոյն նուիրակ անուանել: Զի ոչ է նա ընդհանուր զրուխ Եկեղեցւոյ, եւ հրամայաբար իշխող ազգի. այս պատիւն եւ իշխանութիւնն՝ մի միայն իՍուրբ Եջմիածին նստօղ Սրբազնատուր Հայրապետինն է: Եւ յայսմանէ տքաղել եւ անձոռնի իշխանութենէ քէ որքան անկարգութիւն յառաջանայ իշազս մեր, այն քննողացն է յայտնի. որպէս քէ ուուր մի տուեալ իձեռն անմուտ զօրավարի, ոչ զիտ զզործ ածելն, ուստի՝ զրշնամին եւ զընտանին միապէս խողխողէ, քէ ունիմ հրաման այսպէս առնելոյ, որ անմարք առն մուրացոյի եւ աղքատի՝ բռամբ զողորմութիւն խնդրել:

ԺԹ.

Ապօրինաւոր բռնութիւնս այս սկսաւ իՌՃՇԴ բռուջն մերում, իժամանակս Լուսահողի Կարապետ Կարուղիկոսին Զեյրունցաւոյ. յորժամ Օսմանցիքն տիբեցին մասին Պարսից, եւ զրազումս զերեցին յազգէ մերմէ իւերկիրս Օսմանցաւոյ, որոց աղազան. իՊօլիս օծեալ Եղեւ կարողիկոսութիւն՝ վասն ազատութեան զերեացն: Եւ ինմին ժամանակի Սուրբ Երուսաղեմայ վանօրայքն մեր եւ սուրբն Յակով, սակա ախտաւոր առաջնորդացն անհաւատարմաց կայր անկեալ իներքոյ բազում պարտոց, եւ Բաղիշեցի Գրիգոր Վարդապետն՝ որ կացուցեալ էին իյառաջնորդութիւն նմին, որ նա զպարանոցն իւր. երկարապատ եր ա-

բարեալ մինչեւ ցագատումն պարտուցն : Խնդրեցին ամենայն ժողովուրդքն իշուսահոզի Կարապետ Կարողիկոսն իկոստանդինուպօլիս իմերոյիշեալ քուոչն մերում՝ տալ հրահրակացն նորին կոնդակ՝ ամենայն ուրեք ընկալուու զնոսա իրեն զնուիրակունս սուրբ Արոռոյն էջմիածնի . զի մինչեւ ցայնժամ անուանակրութիւնս այս ոչ զոյր առ նոսա , որպէս յայտ է իննազոյն կոնդակաց նոցին , եւ իգրոյ Կարապետ Կարողիկոսին : Եւ նա ընկալեալ զինդիրս նոցա , ինքն արար օգնութիւնս բազումս , եւ յորդորիչ եղեա բազմաց , եւ ետ նուազ մի կոնդակ ըստ խնդրանաց նոցա վասն զերծման պարտուցն : Խսկ նոքա զկնի մահուան երանելի Հայրապետին , սեպհականեցին զայն ինքեանց , եւ սկսան ըստ օրինի Կարողիկոսաց կոնդակս զրել , եւ հրաւիրանք նոցա փքացան եւ ծանրացան իմերայ ժողովրդեանն իրեն զրոնակալաց զինուորս , եւ սկսան անիծանել , նզովել , բանադրել , կապել եւ արձակել զպարզամիտ ժողովուրդսն մեր մինչ ցայսօր ժամանակի : Եւ առաջնորդք Վիճակացն երկնչելով իտամական իշխանութեանէ , սկսան տալ զինքեանս իլուուրեան , զի մի դաւ ինչ յարուսցեն եւ ածցեն վնաս հասարակութեանն , որպէս իրազում ուրեք տեսանի այն խանզարեալ կարզ :

Ի.

Այլ իմէջ բարեկարգ քրիստոնեական իշխանութեանս ոչ այսպէս Առաջնորդն առաջնորդէ , եւ իւր առնելիքն յինքենէ միայն կախեակք՝ ըստ հրամանին Աստուծոյ եւ կանոնաց մեծի Կայսերուհոյն բարեպաշտի , եւ Սրբազնասուրք Հայրապետին ամենայն Հայոց , եւ սրբոյ Արոռոյն էջմիածնի , իսկ եկամուտն ազատ յամենայն իշխանական վրեժինըրեանց եւ հարկին պահանջմանց . որք եւ ոչ ունին հրաման յևստուծոյ եւ իլանոնաց եւ իմէնջ՝ հրաւիրակք նոցա , դնել յարու , յիշել իպատարազին , եւ առնուէ զաւազան իձեռն իթափօրին , անիծանել զոք եւ կամ արձակել , զի այս ամենայն իփառասէր տգիտաց եւ գունկաց է սահմանեալ :

ԻԱ.

Յորժամ եկեալ հրաւիրակն ունիցի կոնդակ ի՛սուրք էջմիածնայ , կամ վկայական հրամանազքիր , ընկալուու պարտիմք զնա , եւ առաւել պատուել քան զամենայն ժողովքարարս , եւ զմիմեանս յորդորել տալ զողորմութիւնս վասն շնուրեան եւ պայծառութեան վանօրիցն մերոց իփառս Աստուծոյ , իպատիս սուրբ Արոռոյն էջմիածնի , եւ իմիշիրարութիւն ազգիս մերոյ . եւ հասք նոցա այս է որ զրեմս . տուրք յատուկ յատուկ անձանց . կտակ , խոսամունք , զանձանակք , եւ այլք այսպիսիք . բայց ամենայն յօժարութեամբ եւ սիրով :

ԻԲ.

Եւ երեւ վիճակի եղեալ Սրբազան Արքեպիսկոպոսն ոչ լինիցի իքաղաքի անդ ուր հրաւիրակն եկեալ է , թէ եւ իցէ կոնդակաւ . Սրբազան Հայրապետին , բայց հոգեւոր դատարանքն եւ վերակացուք պարտին յայտնել նմա . եւ նա որպէս զրեսցէ՝ այնպէս արասցեն :

ԻԳ.

Պարտ է Առաջնորդին հրամայիլ քահանայիցն եւ ժողովրդեանն հոգեւոր դատարանաւն որ իւրաքանչիւրքն զոր ինչ ըդխի իսրտից իւրեանց՝ շուտով տայցեն նմա . եւ երեւ իքաղաքի անդ լինիցի , ինքնին ծանուցումն արարեալ զամենեսեան յորդորեսցէ յառաւտ տուրս : Վերոզրեցեալքս յաղաս եկամուտ կարգաւորացն՝ ներքոզրեցելովքն յայտնի լինի ամենայն խոնեմ եւ շրջանկատ բանասիրաց :

ԻԴ.

Կարգաւոր ոք , ով ոք եւ իցէ , թէ խուրքը Երուսաղեմայ եւ թէ յայլ վանօրէից եւ յանապատաց , ըստ չափու զիտուրեան իւրոյ ունի իշխանութիւն ի՛տեառնէ մերմէ Յիսուսի Քրիստոս քարոզել ժողովրդեանն զրանն կենաց , ըստ այնմ թէ « Ուսուցեք նոցա պահել զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ » : Այլ սակայն ոչ զոյ նոցա հրաման՝ արոռով եւ զաւազանաւ վարի յեկեղեցաջ , որ ոչ է ինքեանց վիճակի . եւ հովուուրիւն նոցա ոչ է յատուկ յանձննեալ ինքեանց , թէ եւ իցեն Եպիսկոպոսք եւ Վարդապետք , եւ ոչ ձեռնադրութիւն առնել , եւ ոչ այլ եկեղեցական զործ կատարել : Այլ եւ ոչ կապել զոք , կամ արձակել զկապեալ ումեք : Նա եւ զամենայն ինչ զորս ոչ հրամայեն կանոնք , եւ ոչ Տէր մեր Յիսուսի Քրիստոսի . ըստ այնմ թէ « Մի մտանիցէք տան իտուն » : Եւ յառաքումն աշակերտացն յամենայն տեղիս ուր եւ ինքն եր երբալոց՝ առաքեր զնոսա երկուս երկուս , զի յայտնի լինիցի իւրաքանչիւրքոց զործն : Եւ Առաքեալքն սուրբք վիճական բաժանեցին զաշխարհն իմերայ ինքեանց՝ հրամանաւ Հոգույն սրբոյ : Եւ Սուրբն Յովնաննես իսքանչելի տեսլեանն , առ հրեշտակս , այս է առ Եպիսկոպոսունս եօրանց եկեղեցեացն յատուկ զրեք բանս : Եւ սուրբն Պողոս առ Գաղատացին զրէ պարզ բանին՝ յայտ առնելով զրամանմունսն վիճակացն եղեալ ինոզույն սրբոյ ուրոյնապէս հաւատացեալ զու սրբոյն Պետրոսի իրլիքատուրեանն , եւ երանելույն ինքեան Պողոսի յանրլիքատուրեանն եւ կանոն Սրբազան Առաքելոցն որպէս մատամր իսկ ցուցանք վկարգ եւ զաւանդուրիւն Սրբոց եկեղեցեաց յառաքելոց անտի առանձնապէս եղեալ , այսպէս ունելով բանին կարգ , թէ « Այս ինչ աշխարհն եւ այս ինչ ազգ յիայս ինչ անուն Սրբազան առաքելոց ընկայաւ զձեռնադրութիւն եւ այլք այսպիսիք յուրով զոն խուրք զիրս վասն վիճակաւոր եւ

իշխանութիւն այլ եւ այլ կերպիւ պարտին ունել յայլ եւ յայլ տեղիս . այս է յիբումն վիճակի ոմն տիսչարար , եւ ոմն նմանօրէն : Տես եւ իկանոնս առաքելոցն իձեռն Կղեմայ , զլուխս ԼԳ , եւ յայլ տեղիս :

ԵԵ.

Եւ վասն այսորդիկ՝ ես Սրբոյ եւ մեծի Աքոռոյն Էջմիածնի ծայրագոյն նուրբակ եւ Տեառն Սիմեոն երանելի եւ սուրբ Հայրապետի ձեռնասուն աշակերտ , Սանահնեցի Յովսէփ նուաստ Արքեպիսկոպոս Հայոց՝ իվերայ Մայրաքաղաքացն Սանկը Պետրապուրու , Մուկովու , Հաշտարխանու , Նոր Նախիջևանու , Ղզլարու , եւ Մօղուկու , եւ այլ թեմից նոցա , կարգեցի զսակար կանոնս զլուսց յիմուռ վիճակի , վասն բազում այլանդակ գործոց եւ արարմանց եկամուտ ժողովքարարաց . զորոց գործոց զգլխաւորսն ինարկաւորացն եղաք իզլուս կանոնաց , եւ արգելաք , մի եւս այնոքիւք վարիկ , զորս ամենայն զլուսս վճռահատութեամբ եզերեցաք ոչ լինել . զի այնոքիկ յամենայն վիճակի Եսլիսկոպոսին են զործք եւ առնելիք , եւ ոչ նոցա : Եւ նոքա մի համարեսցին զմեզ գու անզգամս՝ որպէս քէ զործ օրինաւոր ժողովոց անձամբ ինչ զործեալ իցեմք , զի ըստ կանոնաց Սրբոց Հարցն՝ իւրաքանչիւր Մայրաքաղաքի Եպիսկոպոս ունի իշխանութիւն տալ կանոնս յիւրում վիճակի եղեալ քաղաքացըն եւ զիւղօրէց . որպէս է եւ այս եղեալ մեր վիճակի . ըստ նոզեւոր պարտաւորութեան մերոյ՝ որ ըստ Բարձրագունեղ կամեցողութեան եւ ողորմութեան Մեծ Կայսերունույն Եկատարինէ երկրորդին , ունելոց եմք նոզեւոր դատարան իյերեւելի քաղաքսն հայաշատ իշխանական , եւ Նոր Նախիջևան : Ուրեմն հարկ իսկ էր մեզ՝ ինմին եղեալ հոգեւոր դատաւորացն յայտ առնել զկանոնս եւ զգնացս իւրաքանչիւրոց . որ իբրևս զմրագ իձեռին ունելով՝ լուսաւոր վարդապետութեամբ եւ ողջամիտ դատողութեամբ կարասցեն սանձել զամենի աւելորդապաշտութիւն օրինազանց

եկամուտ քարոզչացն սուրբ Եկեղեցւոյ . որք զմի եւ զնոյն արանց , եւ բարեկարգել զեկեղեցին եւ զժողովուրդն . յորում ոչ լինիցի արատ եւ աղտեղութիւն ինչ , ըստ բանի սրբազան Առաքելոյն Պօղոսի :

ԵԶ.

Եւ եւս , եւ զօրութեամբ հնզից կոնդակացն տուեցելոց մեզ իվեհազունութենին բարձր հրամանի ինքնիշխան մեծի Կարուղիկոսին եւ ծայրագոյն Պատրիարքի ամենայն Հայոց , եւ իմ իսկ հոգեւոր ծնողի Տեառն Տեառն Սիմեոն իթրիստոս հանգուցեալ Սուրբ եւ Երջանիկ Հայրապետին Սրբոյ եւ մեծի Լուսանկար Աքոռոյն Էջմիածնի , որ իբուր զրուած հնզից կոնդակացն համառօտարար խօսի զայնցանէ , զորս մեք կարգեցաք եւ կարգելոց եմք հասարակ առ հասարակ զայնոսիկ : Եւ մանաւանդ քէ՝ ըստ անդառնալի հարկադրութեան նոյնոյ Լուսանոզի Սուրբ Հայրապետին , որ հարկադրէ մեզ դնել զհարկաւոր կանոնս նորաշէն քաղաքին Նախիջեւանայ ըստ նախնի օրինի Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ , եւ երիւք կոնդակօք զրէ հասարակութեան նոցա քէ՝ զոր ինչ կանոն դնէ որդին մեր Յովսէփ Արքեպիսկոպոսն , ընկալարուք իբրևս իմենչ եղեալ : Ուստի աւանդեմ զայս հոգեւոր դատարանիդ մերոյ եւ Աստուածասէր բարեպաշտութեան հայարակ քահանայիցդ եւ ժողովրդոցդ : Ընկալարուք սիրով իւրաքարզութիւն քաղաքի ձերոյ , եւ պահեցք հաստատուն առ յապայսն ինաստատութիւն Եկեղեցեաց ձերոց : Զայսմանէ հարկ է տեսանել եւ իկանոնցիքս , որ իկանոնս առաքելոց , զոր իձեռն Կղեմայ . զլուխ Լ.Յ. Լ.Յ. , եւ իբազում տեղիս :

Նուաստ Յովսէփի Արքեպիսկոպոս Ռուսաց երկրի ամենայն Հայոց Ազգին , եւ հիմնադիր քաղաքիս նախիշեւանայ :

ԽՐԱՏԱԿԱՆ ԵՒ ԶՈՒՄՐՃԱԼԻ

Հ Ի Ն Ե Ւ Ն Ո Ր Պ Ա Տ Մ Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

* Այն ժամանակներն որ Կոստանդին Փաւլովիչ կայսրեղբայրը Լեհաստանի փոխարքայ էր , Վարշաւի մէջ կդատնուէր Սուլքովաքի անունով երեւելի գերասանը որ քիչ մը խում սիրով էր : Օր մը երբոր սա փողոցին մէջ երերաշլելով կքալէր տեսաւ որ կայսերեղ-

բայրը գիմացէն կուգայ , իսկոյն ոյժ ու սիրամէկ ըրաւ ինքզինքը ժողվըտեց ու զինուորի պէս ձիգ կայսած բարեւ տուաւ իշխանին : Մօտեցաւ իշխանը գերասանին , զարկաւ անոր ուսին ու հարցուց թէ « Այսօր ինչ գեր կը խաղաս » . իսկոյն վրայ բերաւ գերասանը

*.